ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 2

«ՕԲԹ-ԳՀԾՁԲ-25/01» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի

հայտերի բացման և գնահատման նիստի

ք. Երևան 23 դեկտեմբերի, 2024 թվական

ժամը 12:00

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ՝ Ռոնա Ահարոնյան

Հանձնաժողովի անդամներ՝ Լիանա Հովակիմյան

Մարինե Ղևոնդյան

Հանձնաժողովի քարտուղար՝ Արևհատ Ավետիսյան

**1. Տեղեկություններ հայտերի բացման վայրի, օրվա և ժամի մասին**

***/ հանձնաժողովի նախագահ Ռ. Ահարոնյան/***

1.1 «ՕԲԹ-ԳՀԾՁԲ-25/01» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հայտերը բացվել են հրավերով սահմանված վայրում և ժամկետում՝ քաղաք Երևան, Թումանյան 54 հասցեում, 2024 թվականի դեկտեմբերի 23-ին, ժամը 12:00-ին:

**2. Հայտեր ներկայացրած մասնակիցների անվանումները /անունները/ և հասցեները**

***/ հանձնաժողովի նախագահ Ռ. Ահարոնյան/***

2.1 «ՕԲԹ-ԳՀԾՁԲ-25/01» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հայտեր ներկայացրել են հետևյալ մասնակիցները.

| Հ/Հ | Մասնակցի անվանումը /անունը/ | Մասնակցի հասցեն, հեռախոսահամարը | Մասնակցի էլ. փոստի հասցեն |
|---|---|---|---|
| 1 | «Դելյուքս Պրինտ» ՍՊԸ | ՀՀ, Կոտայքի մարզ, գ. Քանաքեռավան, 18-րդ փողոց N 5 093 42 24 35 | deluxeprinting@mail.ru |
| 2 | «Գլոբալ Պրինտ» ՍՊԸ | ք. Երևան, Արցախի փ. 8բ շենք, 18 բն. 099 434530 | meri.goaryan.89@mail.ru |
| 3 | «Արփինե Բեգլարյան» ԱՁ | ՀՀ, Կոտայքի մարզ, ք. Եղվարդ, Զովունի 11 փ. 81 շ., բն. 4 041 06 22 78 | beglaryanprint@mail.ru |
| 4 | «Ինտեր Պրինտ» ՍՊԸ | ք. Երևան, Մ. Խորենացի 28 091 28 84 44 | info@interprint.am |
| 5 | «Օպտիմա Թրեյդ» ՍՊԸ | ք. Երևան, Տիգրան Պետրոսյան 32 շ., բն. 11 011 81 81 00 | artyom.nahapetyan@otrade.am |
| 6 | «ԲիԹիԷլ Սերվիսիս» ՍՊԸ | ք. Երևան, Նալբանդյան 7/1, բն. 9 010 70 10 56 | info@abcprint.am |

## 3. Տվյալներ՝ ծրարների կազմման և ներկայացման՝ հրավերի պահանջներին համապատասխանության վերաբերյալ

**/ հանձնաժողովի նախագահ Ռ. Ահարոնյան/**

**3.1** Մասնակիցների կողմից «ՕԲԹ-ԳՀԾՁԲ-25/01» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հայտեր պարունակող ծրարները կազմվել և ներկայացվել են հրավերի պահանջներին համապատասխան:

## 4. Տվյալներ՝ բացված յուրաքանչյուր ծրարում հրավերով պահանջվող փաստաթղթերի առկայության, յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ հրավերով սահմանված պայմաններին համապատասխան կազմված լինելու մասին

**/ հանձնաժողովի նախագահ Ռ. Ահարոնյան/**

**4.1** «ՕԲԹ-ԳՀԾՁԲ-25/01» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի մասնակիցների կողմից ներկայացված հայտ պարունակող և գնահատող հանձնաժողովի կողմից բացված ծրարներում առկա են հրավերով պահանջվող փաստաթղթերը և ներկայացրած փաստաթղթերը կազմված են հրավերով սահմանված պայմաններին համապատասխան, բացառությամբ

**ա.** «Բիթիէլ Սերվիսիս» ՍՊԸ-ի կողմից ներկայացված **Հավելված 1-ը՝ ԴԻՄՈՒՄ-ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ գնանշման հարցմանը մասնակցելու,** չի համապատասխանում հրավերով սահմանված պահանջներին:

**բ.** «Դելյուքս Պրինտ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված **Հավելված 1-ում սխալ է նշված ընկերության ՀՎՀՀ-ն:**

**գ.** «Օպտիմա Թրեյդ» ՍՊԸ-ի և «Գլոբալ Պրինտ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված **Հավելված 1-ում սխալ է նշված ընկերությունների իրական շահառուների վերաբերյալ տեղեկություններ պարունակող կայքէջի հղումը:**

4.2 «ՕԲԹ-ԳՀԾՁԲ-25/01» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովը՝ ղեկավարվելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» Կարգի 41-րդ կետով, որոշեց առաջարկել վերոնշյալ մասնակիցներին մեկ աշխատանքային օրում շտկել առկա անհամապատասխանությունները: Անհամապատասխանությունները սահմանված ժամկետում չշտկելու դեպքում մասնակիցների հայտերը կգնահատվեն անբավարար և կմերժվեն:

## 5. Տեղեկատվություն՝ հայտերի վերաբերյալ հարցումների և պատասխանների, հրավերով սահմանված գնման առարկայի բնութագրերի վերաբերյալ հիմնավորումների մասին

**/ հանձնաժողովի նախագահ Ռ. Ահարոնյան/**

5.1 «ՕԲԹ-ԳՀԾՁԲ-25/01» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հայտերի վերաբերյալ հարցումներ և պատասխաններ չեն եղել:

5.2 «ՕԲԹ-ԳՀԾՁԲ-25/01» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերով սահմանված գնման առարկայի բնութագրերի՝ օրենքով նախատեսված մրցակցության ապահովման և

խտրականության բացառման պահանջների տեսանկյունից գնահատող հանձնաժողովի քարտուղարին հիմնավորումներ չեն ներկայացվել:

**6. Ընթացակարգի հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը հաստատելու մասին**

***/ հանձնաժողովի նախագահ Ռ. Ահարոնյան/***

6.1 «ՕԲԹ-ԳՀԾՁԲ-25/01» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել 2024 թվականի դեկտեմբերի 26-ին, ժամը 12:00, քաղաք Երևան, Թումանյան 54 հասցեում:

**Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0**

Հանձնաժողովի նախագահ ______ Ռ. Ահարոնյան

Հանձնաժողովի անդամներ ______ Լ. Հովակիմյան

______ Մ. Ղևոնդյան

Հանձնաժողովի քարտուղար ______ Ա. Ավետիսյան